# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

ք.Երևան, Մամիկոնյանց 46/5

«01» 10 2015թ. N 91-Լ

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մարմինների և ստորաբաժանումների պետերին

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ

ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՉՀԵՌԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼԻՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԱՆՁՆԱԳԻՐԸ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածով նախատեսված ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոց կիրառելիս կասկածյալի կամ մեղադրյալի կողմից առանց վարույթն իրականացնող մարմնի թույլտվության այլ տեղանք մեկնելը կամ բնակության վայրը փոխելը կանխելու անհրաժեշտությունը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով՝

Հանձնարարում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածով նախատեսված ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոց կիրառելու մասին որոշումը կասկածյալին կամ մեղադրյալին հայտարարելուց հետո «Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի և Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 25-ի N821 որոշման 19-րդ կետի 1-ին մասի համաձայն՝ ժամանակավորապես վերցնել

կասկածյալի կամ մեղադրյալի Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիրը և այդ մասին անմիջապես գրավոր հայտնել Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն:

2.Սույն հանձնարարականի 1-ին կետով նախատեսված որոշումը հայտարարելուց հետո անհապաղ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի N884-Ն որոշմամբ սահմանված տեղեկատվությունը տրամադրել Հայաստանի Հանրապետության ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչությանը՝ Հայաստանի Հանրապետության սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգում մուտքագրելու համար:

3. Կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը վերացնելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կայացնելուց հետո անմիջապես վերադարձնել Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիրը և այդ մասին անհրաժեշտ տեղեկատվությունը տրամադրել Հայաստանի Հանրապետության ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչությանը:

4.Հանձնարարականի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մարմինների և ստորաբաժանումների պետերին:

Ա. Գ. Հովսեփյան